

ARMENIAN CATHOLICOSATE
OF CILICIA
Antelias, Lebanon



كاثوليكية
الأرمن الأرثوذكس
أنطلياس، لبنان

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

Անթիլիաս, 30 Դեկտեմբեր 2014

Յարգարժան անդամներ ՀՅԴ Բիւրոյի,

Խոր ցաւով իմացանք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի անդամ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի երկար տարիներու պատգամաւոր եւ Գերմանիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահան Յովհաննիսեանի մահուան գոյժը:

Մենք մօտէն նանչցած ենք հանգուցեալը, եւ իր մօտ տեսած լուրջ մտաւորականը, պատասխանատու հասարակական գործիչը եւ գերազանցօրէն հայրենասէր մարդը: Իր անձին այս երեք յատկանշական գիծերը մնայուն ներկայութիւն դարձան իր ողջ կեանքին ու գործունէութեան ընթացքին: Հետեւաբար, իր մահը մեծ կորուստ մըն է ոչ միայն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, այլ մեր հայրենիքին ու ժողովուրդին համար:

Ձեզի կը յայտնենք Մեր խորագգած ցաւակցութիւնները: Կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած Վահան Յովհաննիսեանի հոգին ընդունի երկնային երանական խաղաղութեան մէջ եւ Սուրբ Հոգւոյն միջոցաւ մխիթարէ իր ընտանեկան պարագաները, եւ մեծ ընտանիքին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամները:

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ